



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

«30» նոյեմբերի 2016թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 67-Ա

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՈՒԿ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, հիմք ընդունելով 2016թ. հոկտեմբերի 3-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի N 966-Ա/2 հրամանը, 2016թ. հոկտեմբերի 24-ի ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի N58-Ա հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2016թ. նոյեմբերի 29-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում բարձր արդյունավետությամբ հատուկ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ. Գալստյան)՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2016 թվականի դեկտեմբերի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՆԿ

գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում բարձր արդյունավետությամբ հատուկ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների

h/h	Ազգանուն անուն	Թեմայի գիտական կազմակերպություն	Գիտության բնագավառ	Թեմայի վերնագիր
1	Հախումյան Արսեն	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Փոքրաչափ թռչող թիրախների ռադիոլուկացիոն հայտնաբերում
2	Մարկոսյան Մհեր	«Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Ռադիոլուկացիոն համակարգերի նախագծման և փորձակոնստրուկտորական լաբորատորիա
3	Պետրոսյան Ստեփան	«Օպտոէլեկտրոնիկայի գիտաարտադրական կենտրոն» ՍՊԸ	Ճարտարագիտություն և տեխնոլոգիա, նանոտեխնոլոգիա	Անձնակազմի և զինվորական տեխնիկայի պաշտպանության նանոկառուցվածքային պեոլիտային ապակե-բյուրեղական բազմաշերտ զրահաթիթեղների և վահանակների տեխնոլոգիայի մշակում և հատկությունների ուսումնասիրում
4	Վարդանյան Արամ	«Բարվա ինովացիոն կենտրոն» ՍՊԸ	Ճարտարագիտություն և տեխնոլոգիա	«Հատուկ նշանակության ակուստիկական տեխնիկական միջոցների մշակման» գիտահետազոտական լաբորատորիա